ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԵՌՈՒՍՏԱԲԱՆԱՎԵՃԵՐԸ ՀԱՍՏԱԿԵՑՆՈՒՄ ԵՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հոկտեմբերի 17-ին եւ 18-ին, ընտրություններից տասն օր շուտ, Վրաստանի նախագահի թեկնածուները Հանրային հեռուստատեսության Առաջին ալիքի եթերում անցկացրին նախընտրական բանավեճեր:

Բանավեճերի առաջին փուլին մասնակցել են Դավիթ Բաքրաձեն («Միասնական ազգային շարժում»), Ջուրաբ Խարատիշվիլին («Եվրոպական դեմոկրատներ»), Գիորգի Թարգամաձեն (Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություն), Գիորգի Մարգվելաշվիլին («Վրացական երազանք»):

Հեռուստաբանավեճի երկրորդ փուլին մասնակցեցին Կոբա Դավիթաշվիլին («Ժողովրդի կուսակցություն»), Սերգո Ջավախիձեն («Հանուն արդար Վրաստանի»), Թեյմուրազ Մժավիան (Քրիստոնեա-դեմոկրատական ժողովրդական կուսակցություն):

«Դեմոկրատական շարժու-Միասնական Վրաստան» կուսակցությունից նախագահի թեկնածու, խորհրդարանի նախկին խոսնակ Նինո Բուրջանաձեն հրաժարվեց մասնակցել հեռուստաբանավեճին:

Բանավեճի ընթացքում նախագահի թեկնածուները հերթականությամբ իրենց տեսակետներն են շարադրել չորս հարցի շուրջ՝ երկրի արտաքին քաղաքականությունը, տարածքային ամբողջականության խնդրի լուծումը, Վրաստանի տնտեսական զարգացումը եւ կառավարության ու խորհրդարանի հետ համագործակցությունը:

Բանավեճի բոլոր մասնակիցներին հավասար ժամանակ է հատկացվել իրենց ընտրական ծրագրերը ներկայացնելու եւ մյուս թեկնածուների հետ բանավիճելու համար: Հանդիսականները կարող էին թեկնածուներին իրենց հարցերն ուղղել Առաջին ալիքի կայքում կամ էլեկտրոնային փոստով:

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ապա վրացերենով վարչապետը խոսեց թեկնածուի նախընտրական ծրագրի առաջնահերթությունների մասին:

Վարչապետն ասաց, որ կրկին առաջնահերթային է գյուղատնտեսությունը եւ դիմեց գործարարներին, որպեսզի նրանք ստեղծեն վերամշակող գործարաններ եւ, որ պետությունը նրանց կաջակցի:

«Ես տեղյակ եմ, որ կարտոֆիլի բերքը այս տարի առատ է: Առողջապահությունը մնում է առաջնահերթային: Եվ պոլիս հիմա ստանում է ամեն մի բնակիչ, որ դժվար վիրահատությունները ֆինանսավորվում են պետության կողմից եւ ապագայում պետք է խորացվի եւ ֆինանսավորումը պետք է ավելացվի այս ուղղությամբ»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին՝ հավելելով, որ վրացերեն լեզվի ուսուցմանն ավելի շատ ուշադրություն կհատկացվի, որ ավելի շատ հայ մասնակցի երկրի ղեկավարմանը:

Իր հերթին, «Վրացական երազանք» կոալիցիայից նախագահության թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին եւս շեշտը դրեց նախընտրական ծրագրով նախատեսված ընդհանուր բնույթի հարցերի վրա: «Մենք կխոսենք, թե ինչպիսի երկիր ենք կառուցելու: Մենք կխոսենք, թե ինչ է անելու ամեն մի Վրաստանի քաղաքացի, ինչպես է մասնակցելու պետության կառուցմանը: Մենք տեսել ենք, թե ինչ է արվել մի տարվա ընթացքում եւ որ ուղղությամբ էր այն զարգանում: Գլխավորը, ինչի մասին մենք մտածում ենք եւ որ ուղղությամբ մենք աշխատել ենք ամեն օր՝ դա ամեն մի ընտանիքն է, ամեն մի Վրաստանի քաղաքացին է, որ ստանան որեւէ օգնություն»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Թեկնածուն խոսեց նաեւ ֆերմերական վաուչերների մասին, որոնք, ըստ նրա խոսքերի, մեծ աջակցություն էր: Թեկնածուն ասաց, որ շատ կարեւոր է, որպեսզի պետությունը ղեկավարի մի կուսակցություն: Նա կոչ արեց ժողովրդին անպայման մասնակցել ընտրություններին եւ շրջագծել «41» համարը: Հատկանշական է, որ Ախալքալաքիում հանդիպմանը՝ ո՛չ վարչապետը եւ ո՛չ էլ նախագահության թեկնածուն չանդրադարձան տեղի հայ բնակչությանն առանձնակի հուզող հիմնախնդիրներից եւ ոչ մեկին, չտրվեցին նաեւ կոնկրետ խոստումներ:

Քարոզարշավի շրջանակներում, «Վրացական երազանք» կոալիցիայի նախագահության թեկնածու Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպեց եւ իր ծրագիրը ներկայացրեց Նինոծմինդայում շրջկենտրոնի եւ շրջակա գյուղերի բնակիչների ներկայացուցիչներին:

ՆԻՆՈ ԲՈՒՐՋԱՆԱՁԵ. «ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՍ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ, ՈՐ ՔԵԶ ԼԻԱՐԺԵՔ ՔԱՂԱՔԱՑԻ ԶԳԱՍ»

Նախընտրական քարոզարշավի շրջանակներում «Ժողովրդավարական շարժում-միասնական Վրաստան» նախագահության թեկնածու Նինո Բուրջանաձեն եղավ Ախալքալաքիում:

Քաղաքի Խաս բախչա կենտրոնական այգում կայացած հանդիպմանը, Նինո Բուրջանաձեն խոսեց «Ազգային շարժման» սխալ կառավարության մասին եւ ասաց. «Վրացական երազանքին» մեղադրում է այն բանում, որ արդարությունը վերականգնելու փոխարեն, նրանք կոհաբիտացիա մտան «Ազգային շարժման» հետ: Բուրջանաձեն խոստացավ, որ ինքն է վերականգնելու արդարությունը:

Նա խոսեց 2008-ի կռվի մասին, մեղադրեց «Ազգային շարժմանը» տարածքները կորցնելու, նոր փախստականներ ձեռքբերելու եւ տնտեսական ճգնաժամ ստեղծելու մեջ: Թեկնածուն խոստացավ, որ անպայման բանտ կնստեցնի Սաակաշվիլուն եւ «նրա ընկերներին», ինչը ծափողջույններով ընդունեցին հավաքվածները: Բուրջանաձեն ավելացրեց, որ իր խոստացած արդարությունը ոչ միայն մեղավորներին պատժելն է, այլ՝ կենսաթոշակների ավելացումը եւ 7-9 միլիարդի վերադարձը ժողովրդին, ինչը բյուջեից կորել էր «Ազգային շարժման» կառավարության ժամանակ:

Նինո Բուրջանաձեն խոսեց նաեւ շրջաններում իշխանության ուշադրության պակասի մասին եւ վստահեցրեց, որ այդ անուշադրությունը այստեղ ոչ թե ազգային պատկանելիությունից է, այլ առկա է ամբողջ երկրում եւ ավելացրեց, որ այս հարցը լուծելու է կենտրոնացված ճիշտ կառավարությամբ:

Թեկնածուն զղջաց, որ չի շփվում հավաքվածների հետ հայերեն, սակայն նշելով, որ շատ է հարգում ռուսերենը, ասաց, որ նրա համար շատ կարեւոր է, որպեսզի շփվի մարդկանց հետ վրացերենով:

«Ես շատ եմ ուրախանում, որ մարդիկ դրան հասկանալով են վերաբերվում, իրենք են նույնիսկ այդ հարցը բարձրացնում: Մենք հարգանքով ենք վերաբերվում Վրաստանում ապրող մարդկանց յուրաքանչյուր լեզվին, եւ նրանք պետք է իմանան իրենց հարազատ լեզուն, բայց նրանք պետք է իմանան եւ պետական լեզուն, որպեսզի կարողանան մեր պետության լիարժեք քաղաքացի զգալ»,- հայտարարեց Նինո Բուրջանաձեն:

Թեկնածուի քարոզչական թերթը չեն թարգմանել հայերենով, որովհետեւ չեն հասցրել, ինչպես ասաց Բուրջանաձեն:

Թեկնածուն պատասխանեց նաեւ հավաքվածների հարցերին:

Մի տիկին հարցրեց, թե կարո՞ղ է արդյոք խոստանալ թեկնածուն, որ նախագահ դառնալուց հետո կաջակցի «Հայոց պատմություն» առարկան դպրոցական ծրագիր մտցնելուն: Ինչին թեկնածուն պատասխանեց՝ ապշած էր, երբ իմացավ, որ «Վրաց պատմություն» եւս երեխաները չեն սովորում դպրոցում, հավելեց, որ պետք է ճշտել, թե ում է ձեռնտու, որպեսզի երեխաները պատմություն չգիտենան: Եվ ասաց, որ դպրոցներում շատ բան պետք է վերանայել:

Հնչեցին նաեւ այլ հարցեր ու պատասխաններ:

Վերջում Նինո Բուրջանաձեն հավելեց՝ բոլոր այս հարցերը կկարգավորվեն, երբ կլինի ճիշտ համակարգ եւ, որ նա կառուցելու է այդ համակարգը, ինչպես նաեւ հորդորեց գալիք ընտրություններին ձայն տալ «14» համարին:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ՀԱՎՈՒՐ ՊԱՏՇԱՃԻ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑ ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻ ՏՈՆԸ

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Տոնացույցով, հոկտեմբերի 12-ին նշվեց Սուրբ Թարգմանիչ Վարդապետներ Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտոցի եւ նրանց աշակերտների տոնը: Այն հայ ժողովրդի նվիրական եւ սիրված ազգային-եկեղեցական տոներից է:

Թբիլիսիի Սուրբ էջմիածին եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ, մատուցվեց Սուրբ պատարագ: Պատարագիչ քահանան էր Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու լուսարարապետ Տեր Հուսիկ Հարությունյանը: Հատկանշական է, որ ի թիվս բազում հավատացյալների, Սուրբ պատարագին ներկա էին «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի երեխաները եւ «Սուրբ Գրիգոր Նարեկացի» հայերենի մեկօրյա վարժարանի սաները:

Հավարտ պատարագի՝ թեմական առաջնորդը քարոզ խոսեց օրվա խորհրդի, հայ ժողովրդի եւ հայ եկեղեցու տարեգրությունում ազգի երեւելիներ Վռամշապուհ թագավորի, Սահակ Պարթեւ կաթողիկոսի, եռամեծար Մեսրոպ Մաշտոցի եւ նրանց աշակերտների մասին: Նա ի մասնավորի ներկայացրեց հայոց գրերի ստեղծման, հայոց պատմության, գիտության ու փիլիսոփայության զարգացման գործում այն մեծ դերակատարությունը, որի շնորհիվ ազգն ունի իր այբուբենը, դասվում է աշխարհի հնագույն եւ քաղաքակիրթ ժողովուրդների շարքը:

Այնուհետեւ հավատացյալների թափորը ուղղվեց դեպի Խոջիվանքի Հայ գրողների եւ հասարակական գործիչների պանթեոն, որտեղ ի խոնարհում ազգի մեծամեծների հիշատակի, կատարվեց հոգեհանգստի կարգ: Տոնական օրվա առթիվ շնորհավորեցին եւ Սուրբ Վարդապետների գործը շարունակելու կոչով հավաքվածներին դիմեցին Վրաստանի նախագահի խորհրդական, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը եւ Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը:

Թարգմանչաց օրվան նվիրված միջոցառումների հաջորդ հանգրվան դարձավ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնը: Այստեղ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախաձեռնությամբ եւ ՀՀ սփյուռքի նախարարության աջակցությամբ կայացավ դպրոցականների գրական մրցանակաբաշխության մասնակիցների պարգեւատրման արարողությունը:

Հանդիսավոր արարողությանը ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Կամուրջ» գրական-մշակութային հասարակական կազմակերպության նախագահ, բանաստեղծուհի Անահիտ Բոստանջյանը, գրողներ, հայկական համայնքային կառույցների ղեկավարներ, ուսուցիչներ, ծնողներ: Միջոցառմանը ներկա էին դպրոցականներ Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Մառնեուլիի շրջանների եւ գյուղերի դպրոցներից:

Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գեւորգ Սնխչյանը, անդրադարձ կատարելով մրցանակաբաշխության նպատակին եւ առաջադրանքներին, ընդգծեց մրցույթի կամավորական բնույթը: Նա բարձրաձանեց մրցույթի պահանջները՝ Հայոց Ցեղասպանության, Հայ գրատպության 500-ամյակի, հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամական կապերի թեմաներով գրական ստեղծագործություն: Մրցույթին մասնակցել է 70 աշակերտ քաղաք Թբիլիսիի եւ Վրաստանի հայաբնակ շրջաններից:

Չսպասելով ՀՀ սփյուռքի նախարարության կողմից արդյունքների հրապարակմանը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունը ամփոփեց մրցույթի արդյունքները:

Երեւանի Հովհ.Թումանյանի տուն-թանգարանի տնօրեն Նարինե Թուխիկյանը, շնորհավորեց բոլոր մրցանակակիրներին եւ նվիրեց տուն-թանգարանի պատվոգիրը եւ Թումանյանի ստեղծագործությունների հազվագյուտ նմուշների հրատարակություններ:

Անահիտ Բոստանջյանը, ողջունելով նախաձեռնությունը, բարեմաղթանքի խոսքեր ուղղեց մասնակիցներին, իսկ բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարին շնորհավորեց մասնագիտական օրվա կապակցությամբ, ով 60-ամյա գործունեության տարիներին իր փայլուն թարգմանությամբ վրաց հասարակայնությանն է ներկայացնում հայ գրականության գոհարները:

Պարգեւատրվածների անունից շնորհակալության խոսք ասացին լավագույն աշխատանքների հեղինակներ Նինոծմինդայի Ջիգրաշենի դպրոցի աշակերտուհի Արմինե Գեւորգյանը եւ Թբիլիսիի թիվ 104 դպրոցի աշակերտ Արամ Գրիգորյանը:

Սուրբ Թարգմանիչ Վարդապետների տոնին նվիրված Սրբազան պատարագներ մատուցվեցին Վրաստանի բոլոր գործող հայկական եկեղեցիներում:

ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

²èàÔæàôÂÚàôÜ

ԼԻԱՐԺԵՔ ՔՈՒՆ

Ո՞ր դեպքում կարելի է ասել, որ լիարժեք քնել եմ: Եվ ինչպե՞ս կարելի է պարզել այդ լիարժեքությունը:

Ե.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Թբիլիսի

Երկարակեցության կարեւորագույն նախապայմաններից մեկը լիարժեք քունն է, նույնիսկ ավելի կարեւոր, քան ծխախոտի օգտագործման բացակայությունը, մարմնամարզությունը, արյան բարձր ճնշումը կամ էլ խոլեստերինի պարունակությունը:

Աշխատավայրում երկար ժամեր անցկացնելուց հետո, լավ քնի փոխարեն տանը շատերը նախընտրում են հեռուստացույցը կամ ինտերնետը:

Խանգարված քունն ավելացնում է սթրեսային հորմոններն ու թուլացնում նյութափոխանակությունը, որն էլ իր հերթին հանգեցնում է ճնշվածության, նպաստում գիրության, կյանքին սպառնացող մի շարք հիվանդությունների՝ սիրտանոթային, շաքարախտի, արյան բարձր ճնշման առաջացմանը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ամուսնական զույգերից յուրաքանչյուր երրորդը խնդիր ունի զուգակցի անկանոն քնի հետ կապված, երբ սովորաբար ամուսիններից մեկը խռմփացնում է քնած ժամանակ: Ամեն չորրորդը խոստովանում է, որ քնում է առանձին մահճակալին կամ էլ՝ տարբեր սենյակներում:

Ðà¶º´²Ü²Î²Ü

ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆԻ ԶԳՏՈՒՄ

Նախանչում եմ այն մարդկանց, ովքեր հստակորեն գիտեն, թե որտեղ ինչ են դրել, երբ ինչ են անելու: Ինչ մոտ այդպես չի ստացվում: Ինչպե՞ս վարվել:

Մ.Պ.

Բաթումի

Հոգեբանները կարծում են, որ մարդու ինքն իր հանդեպ տածած պատասխանատվությունը նույնքան կարեւոր է, որքան ինքնասիրությունը, հետեւաբար յուրաքանչյուր գործնական եւ նպատակային մարդ պետք է ձգտի կարգապահության: Այդ որակը մարդն ինքը պետք է իր մեջ զարգացնի:

Սովորիր տարբերել շտապ եւ ոչ շտապ գործերը: Դա բոլորովին էլ դժվար չէ, եթե սկսես թղթի վրա բոլոր գործերը գրանցելուց, իսկ հետո դրանք համարակալես՝ սկսելով ամենակարեւորից եւ հաջորդաբար շարունակելով:

Դժվար եւ տհաճ գործերը չի կարելի հետաձգել: Այդպիսի գործերն ավելի լավ է առաջին հերթին անել եւ օրվա այն հատվածում, երբ ավելի լավ ես աշխատում:

Յուրաքանչյուր առարկա իր տեղը պետք է ունենա:

Փորձիր քո սեղանին հայտնված բոլոր նամակների ու փաստաթղթերի հետ կապված գործերն անմիջապես ավարտել: Մի՛ մոռացիր յուրաքանչյուր փաստաթղթի տակ ամսաթիվ նշել, երբ հաջորդ անգամ սկսես թղթերը դասավորել, հնացածները հեշտությամբ կտարբերես:

Ø²êÜ²¶º îÆ ÊàðÐàôð¸

ՄԱԶԵՐԻ ԽՆԱՄՔԸ ԱՇՆԱՆԸ

Ամեն աշուն որոշակի հիմնախնդիրներ են ծագում մազերիս կապակցությամբ: Չգիտեմ, դա ինչո՞վ բացատրել, սակայն աշնանը մազերս, նույնիսկ սովորական խնամքի պայմաններում էլ, կորցնում են փայլը, կարծես «գորշանում» են: Ի՞նչ խորհուրդ կտայիք:

Գ.ՀԱԿՈԲՅԱՆ

Բոլնիսի

Մազերն ավելի հաճախ սանրեք, որովհետեւ մազերի սոխուկներն այդ ժամանակ անհրաժեշտ էներգիա են ստանում: Որպեսզի մազերին վերադարձնեք բնական փայլը, հատուկ նյութեր օգտագործեք, որոնց մեջ կան A, E եւ B վիտամիններ:

Աշնանը մազերը կորցնում են գեղեցիկ տեսքը, փխրուն են դառնում, կարող են թափվել: Դրանից խուսափելու համար կարելի է դիմակ պատրաստել. վերցրեք 2 հատ ձու, 5 ճ/գդ. ձիթապտղի ձեթ, 1 ճ/գդ. մեղր: Վերջում լվացեք գոլ ջրով:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ

ԹԵ ՄԱՐԴԸ ՔԱՆԻ ԱՆԳԱՄ Է ԹԱՐԹՈՒՄ

Ամեն օր մարդը թարթում է 11,5 հզ. անգամ: Մարդու աչքը կշռում է 7-8 գրամ: Ամենամեծ աչքը պատկանում է գիգանտ կաղամարին՝ 38 սմ տրամագծով (մարդու երկու գլխի չափ): Մարդու ամեն կոպի վրա կա 80 թարթիչ (4 կոպը միասին ունեն 320 թարթիչ): Թարթիչի կյանքի տեւողությունը 100 օր է: Այսպիսով, տղամարդն իր ողջ կյանքի ընթացքում թարթիչները փոխում է 260, իսկ կինը՝ 290 անգամ: Թարթիչների ընդհանուր թիվը ողջ կյանքի համար կազմում է. տղամարդիկ՝ 83 հզ., կանայք՝ 93 հզ.: Վատ տեսողություն ունեցող մարդիկ ավելի հազվադեպ են թարթում աչքերը: Տղամարդը սովորաբար թարթում է 5 վայրկյանը մեկ: Եթե չհաշվենք ամենօրյա այն 8 ժամը, որ ծախսում է մարդը քնի վրա, ստացվում է, որ մեկ օրում մարդը թարթում է 11,5 հզ. անգամ: Կանայք իրենց ողջ կյանքում աչքերը թարթում են 331 մլն, տղամարդիկ՝ 298 մլն անգամ:

ՀՐԱՏԱՊ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից տեխնոլոգիաների հարուցած բազմաթիվ գլոբալ, այդ թվում՝ բնապահպանական խնդիրների մեջ արեւմուտքում օրեցօր աճում է այն հարցերի հրատապությունը, որոնք կապված են «հասարակության քոմփյութերացման» հետ: Իր մի շարք յուրահատկություններով համակարգիչը առանձնահատուկ եւ հարաճունորեն կարեւոր նշանակություն է ստանում: Լինելով 20-րդ դարի վերջի ամենաբարդ տեխնոլոգիաներից մեկը՝ այն միաժամանակ ամենատարածվածներից է, իսկ իր ապագա ազդեցությունների հնարավորությամբ՝ ապահովաբար առաջինը: Երբ մարդկային գործունեության գրեթե բոլոր ձեւերը այս կամ այն չափով միջնորդված են համակարգչային սարքավորումներով, այն դադարում է սոսկ հզոր տեխնիկական միջոց լինելուց եւ դառնում ընկերային կյանքի վրա մեծապես ազդող գործոն, արմատական հասարակական փոփոխությունների զորեղ խթան:

Իր կարեւորությամբ համակարգիչների արդյունաբերությունը արդեն մրցում է ավտոմեքենաների արդյունաբերության հետ, բայց համակարգիչների եւ ավտոմեքենաների համեմատությունը ավելի խորին շերտեր ունի: Այդ համեմատությունը հաճախ կատարվում է ընդգծելու համար սպասվող մեծ ու անկռահելի փոփոխությունները, որոնք ի հայտ կգան համակարգիչների հետագա տարածման հետ: Որեւէ տեխնիկական միջոցի հիմնական հետեւանքները սովորաբար երեւան են գալիս միայն այն բանից հետո, երբ նրա ներկայությունը վճռական չափերի է հասնում: Այդպես եղավ ավտոմեքենաների դեպքում, որոնց համընդհանուր տարածումը այնպիսի խնդիրներ առաջացրեց, որ նախապես անգուշակելի էին եւ որոնց լուծումը պահանջեց մեծագույն վերափոխումներ թե՛ հասարակական կազմակերպման ձեւերի, թե՛ հենց քաղաքների կառուցվածքի մեջ: Իսկ ժամանակակից քաղաքների անլուծելի խնդրի՝ ավտոմեքենաների արտամղած գազերի պատճառած վնասների մասին ոչ ոք չէր կարող ենթադրել անգամ:

Ինչ վերաբերում է «հասարակության քոմփյութերացման» հետ կապված խնդիրներին, ապա այդ ընթացքի մեջ արդեն նկատվել են բազմաթիվ հեգնական անկանոնություններ: Դրանցից մեկը կապված է լազերային տպիչի հետ, որի պատճառով հօդս ցնդեցին առանց թղթի գրասենյակային գրագրության անցնելու մասին կանխագուշակությունները: Ենթադրվում էր, որ համակարգիչը հնարավորություն կտա գրագրությունը կազմակերպելու առանց թղթի եւ թույլ կտա խնայել մեծ քանակությամբ փայտանյութ: Այնինչ լազերային տպիչի ի հայտ գալն ավելի ընդլայնեց թղթի գործածումը համակարգչի վրա հիմնված տարբեր միջավայրերում: Բայց սա ընդամենը մի մասնավոր հարց է:

Խոսելով հասարակության քոմփյութերացման մասին՝ տեղին է ընդգծել, որ հաճախ անհասկանալի է մնում, թե ինչը եւ ինչու է քոմփյութերացվում: Համակարգիչը սովորաբար դիտվում է որպես ռացիոնալության գործիք, բայց եւ կարող է դառնալ ոչ ռացիոնալ կառավարման եւ խնդրահարույց հասարակական գործունեությունների առանցք:

Համակարգիչների տարածումն արդեն ակնհայտ փոփոխություններ է հարուցել տնտեսական ու հասարակական բազմաթիվ ոլորտներում եւ մասնավորապես՝ կրթության ու մշակույթի բնագավառներում՝ առաջ բերելով «Համակարգչային մշակույթի» («Computer Culture») մի համատարած շերտ, որն իր հերթին նշված տիրույթներում նոր բնույթի խնդիրներ է հարուցում՝ մատնանշելով կատարվող տեղաշարժերի «ցանկալի» ու «անցանկալի» կողմերը: Սրա հետ միասին, համակարգիչը, որպես կանոն, հիմք է դառնում տնտեսական եւ հասարակական, այդ թվում՝ մշակութային եւ կրթական ոլորտների հետագա զարգացմանն առնչվող ծրագրերի համար:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ԱԶԳԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

Դեռեւս հին ժամանակներում մարդիկ իրենց ցեղի անդամներին առանձնացնում էին այլ ցեղերից՝ անվանելով «մենք» եւ «նրանք» կամ «ուրիշներ»: Ողջ մարդկությունը բաժանվում էր երկու մասի՝ տվյալ ցեղի անդամները եւ մնացյալ բոլոր մարդիկ՝ անկախ ցեղային պատկանելությունից: Սակայն ազգային գիտակցության զարգացման շրջանում կարիք է առաջանում ինչ-որ կերպ անվանել այդ «մենքը», ուստի ի հայտ են գալիս սեփական ցեղային կամ ազգային անվանումներ: Միեւնույն ժամանակ նաեւ անհրաժեշտ է դառնում տարբերակել շրջապատող ցեղերին թշնամական եւ բարեկամական կարգավիճակների: Առաջանում են անվանումներ, որոնք կարգավորում են ցեղերին համաձայն նշանակության: Շատ ինքնանվանումների հիմքում ընկած է «մարդ» բառը (դեյչ, թյուրք, նիվխ, նենեց եւ այլն), որոշ դեպքերում՝ «յուրային» բառը (շվեդ, սլավոն), հայտնի են զբաղմունքը, հագուստը, տեսքը, տեղանքը, երկիրը բնութագրող անվանումներ: Կան անվանումներ, որոնք առաջացել են առաջնորդների կամ պաշտամունքային կենդանիների անուններից:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Հայրենիքից դուրս ամեն տեղ աշխարհի ծայրն է:

Հայկական ժողովրդական ասացվածք

Լավ է զղջալ հենց սկզբից, վերջում զղջալն օգուտ չունի:

ԴԱՎԻԹ ԳՈՒՐԱՄԻՇՎԻԼԻ (1705-1791)

Վրաց բանաստեղծ

Լավ ընտանիքն այն է, ուր ամուսինն ու կինը ցերեկը մոռանում են, որ իրենք սիրեկաններ են, իսկ գիշերը մոռանում են, որ ամուսիններ են:

ՌՈՍՏԱՆ (1868-1918)

Ֆրանսիացի գրող

Աշխարհում ընտանեկան օջախից քաղցր ոչինչ չկա:

ՑԻՑԵՐՈՆ (մ.թ.ա.106-43)

Հռոմեացի հռետոր

Մարդու մասին չի կարելի դատել առաջին հայացքից. արժանիքները սովորաբար պատված են լինում համեստության քողով, իսկ թերությունները քողարկված են լինում կեղծավորության դիմակով:

Ա.ՊՈՒՐՏՈՅԱՆ

«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸àÎÜ°ð

** - Դուք կարո՞ղ եք բնութագրել այն մարդուն, որը ձեզ ծեծեց,- տուժողին հարցնում է ոստիկանը:*

- Ես հենց դրանով էի զբաղված, որ նա հարձակվեց վրաս...

** - Երեկ ես ցուցահանդեսում էի, եւ պետք է ասեմ, որ միակ նկարը, որը կարելի էր դիտել, քոնն էր...*

- Շնորհակալ եմ, բարեկամ: Իսկ ի՞նչ տպավորություն թողեցին մյուս նկարիչների կտավները:

- Ցավոք, ես չկարողացա նրանց մոտենալ. այնքան մարդ էր խմբվել նրանց առաջ...

** - Շա՜տ եմ սիրում դասական երաժշտություն. հենց դասն սկսվում է, միացնում եմ փլեյերը ու լսում ռոք:*

** Ադամը Եվային հարցնում է.*

Շորերս ուրա:

Տոլմա եմ փաքաթել, ժպտալով պատասխանում է Եվան:

** Պապ, այ պապ, ոչխարները ամուսնանո՞ւմ են:*

Դա, տղա ջան, հենց ոչխարներն են ամուսնանում:

** Երբ կինը ասում է, հագնելու բան չունեմ - նշանակում է նոր շորերն են վերջացել:*

Երբ տղամարդն է ասում, հագնելու չունեմ - նշանակում է մաքուր շորերն են վերջացել:

** Մեկը փախչում է հետապնդումից: Զբոսայգու միջով վազելիս նկատում է, որ շատ մերկ արձաններ կան: Ժամանակ չկորցնելով՝ հանվում է եւ հարմար դիրք ընդունելով՝ քարանում: Մեկ էլ հանկարծ լսում է.*

- Գուլպաներդ հանիր, թե չէ բոլորս կբռնվենք:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԱՄՓՈՓՎԵՑԻՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայաստանի սփյուռքի նախարարության հետ իրենց սերտ համագործակցության մասին ելույթով հանդես եկան եւ նախարարության հոբելյանը շնորհավորեցին սփյուռքահայ մի շարք գործիչներ՝ Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, Լիբանանի «Ազդակ» թերթի խմբագիր Շահան Գանտահարյանը, Համազգային հայ կրթական եւ մշակութային միության կենտրոնական վարչության ատենապետ Վաչե Փափազյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի նախագահ Լենա Հալաջյանը: ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանի շնորհավորական խոսքն ընթերցեց կենտրոնական վարչության խորհրդի անդամ Վազգեն Յակուբյանը:

Իր ողջույնի խոսքում Հայաստանի նախագահը շնորհավորեց Սփյուռքի նախարարության հիմնադրման հոբելյանի առթիվ, խոսեց նախարարության առջեւ դրված խնդիրների, անցած ուղու եւ ձեռքբերումների, այդ կառույցի առաքելության ու նրա կողմից իրականացվելիք հետագա ծրագրերի մասին: Սերժ Սարգսյանը նախարարությանը մաղթեց նորանոր ձեռքբերումներ համայն հայության ներուժը մեկտեղելու, Հայաստան հայրենիքը հզորացնելու եւ Սփյուռքը հայ պահելու համազգային այդ դժվարին առաքելության իրագործման ճանապարհին:

Հանդիպման ավարտին Սփյուռքի նախարարության մի խումբ աշխատակիցների՝ երկարամյա ու բարեխիղճ աշխատանքի համար եւ մի խումբ սփյուռքահայերի՝ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, ինչպես նաեւ հայապահպանության գործում ներդրած ավանդի համար Հայաստանի նախագահը հանձնել է Հայաստանի պետական բարձր պարգեւներ եւ Հայաստանի նախագահի շնորհակալագրեր:

ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ ԱԼՅԱՆՍԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆԸ

Հոկտեմբերի 17-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Հարավային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրային: Հանդիպմանը երկուստեք բարձր է գնահատվել ՆԱՏՕ-ի հետ ծեւավորված արդյունավետ համագործակցությունը գործընկերության բոլոր բնագավառներում:

Հայաստանի նախագահը եւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրայը համակարծիք են եղել, որ հարաբերությունների այս մակարդակը վկայում է Դաշինքի հետ Հայաստանի սերտ փոխգործակցության արդյունքում ձեւավորված խորը եւ ընդգրկուն օրակարգի մասին, ինչը, նրանց համոզմամբ, էապես օգնում է Հայաստանի պաշտպանության եւ անվտանգության համակարգի կատարելագործմանն ու արդիականացմանը: Նույն օրը կայացել է Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի եւ Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրայի հանդիպումը: Զրուցակիցներն անդրադարձել են Հայաստանի եւ ՆԱՏՕ-ի համագործակցությանը վերաբերող մի շարք օրակարգային հարցերի:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հոկտեմբերի 12-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանին:

Հանդիպմանը Արա Աբրահամյանը Հայաստանի նախագահին ներկայացրել է հոկտեմբերի 9-13-ը Հայաստանում եւ Արցախում Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության օրերի շրջանակներում անցկացվող բազմաբնույթ միջոցառումները, հայկական երկու հանրապետություններում համահայկական այդ կառույցի կողմից ամեն տարի իրականացվող բարեգործական ծրագրերն ու մրցանակաբաշխությունները, Սփյուռքում հայապահպանությանն ուղղված նախաձեռնությունները, ինչպես նաեւ համազգային նշանակություն ունեցող ծրագրերի իրագործմանն աջակցության աշխատանքները:

Սերժ Սարգսյանը ողջունել եւ բարձր է գնահատել Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության գործունեությունը, ընդգծելով, որ համահայկական այդ կառույցի կողմից իրականացվող աշխատանքները կարեւոր են Հայրենիքի հզորացման, աշխարհասփյուռ հայության, այդ թվում՝ երիտասարդության համախմբման, Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման տեսանկյունից: Սերժ Սարգսյանը պատրաստակամություն է հայտնել այսուհետ եւս սատարել կառույցին՝ համազգային նախաձեռնությունների իրականացման գործում:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 70-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 15-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, վարչապետ Տիգրան Սարգսյանը Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մասնակցել են Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

Նիստին զեկուցումով ելույթ է ունեցել ԳԱԱ-ի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, որն անցած 70 տարիների մեծագույն ձեռքբերումը համարեց բուն ակադեմիան: Հիմնախնդիրներից Մարտիրոսյանն առանձնացրեց «ենթակառուցվածքների արդիականացումը» եւ «աշխատավարձը»:

Հայաստանի նախագահը ներկաներին շնորհավորեց ակադեմիայի հիմնադրման 70-ամյակի կապակցությամբ եւ գիտության ու կրթության բնագավառում ունեցած մեծ վաստակի եւ ակնառու ծառայությունների համար ՀՀ ԳԱԱ մի խումբ անդամների պարգեւատրել ՀՀ պետական բարձր պարգեւներով՝ շքանշանով, մեդալներով, շնորհել նաեւ պատվավոր կոչումներ:

Հոբելյանական տոնակատարություններին մասնակցում են ավելի քան մեկուկես տասնյակ երկրների պատվիրակություններ, որոնց կազմում հիմնականում հեղինակավոր գիտնականներ են:

ՎԵՐԱԲԱՑՎԵՑ ԻԶՄԻՐԼՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Հոկտեմբերի 15-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ տիկին Ռիտա Սարգսյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ շվեյցարահայ բարերարներ տեր եւ տիկին Տիգրան եւ Հելենա Իզմիրլյանների հետ ներկա են գտնվել Երեւանում Իզմիրլյան բժշկական կենտրոնի վերաբացման արարողությանը:

Հայաստանի նախագահը շրջել է Իզմիրլյան հիմնադրամի եւ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնի բարերարությամբ հիմնանորոգված ու նոր մասնաշենքով համալրված բժշկական հաստատությունում, որն իր՝ Սուրբ Ներսես Մեծ գիտաբժշկական կենտրոնով Հայաստանի առողջապահության ոլորտում մինչ այժմ իրականացված ամենախոշոր բարեգործական ծրագրերից է:

Բացման հանդիսավոր արարողությունից հետո նախագահ Սերժ Սարգսյանը Վեհափառ Հայրապետի եւ ազգային բարերար Տիգրան Իզմիրլյանի ու նրա ընտանիքի անդամների հետ ծառատունկ է կատարել կենտրոնի բակում:

Նույն օրը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հյուրընկալել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ շվեյցարահայ բարերարներ տեր եւ տիկին Տիգրան եւ Հելենա Իզմիրլյաններին:

Սերժ Սարգսյանն ազգային բարերար Տիգրան Իզմիրլյանին պարգեւատրել է Հայաստանի պետական բարձր պարգեւներից մեկով՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանով՝ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման, ինչպես նաեւ երկարամյա ազգանվեր գործունեության համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԿՄԱՍՆԱԿՑԻ ՎԻԼՆՅՈՒՍԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԻՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը նոյեմբերի 28-29 կայանալիք վիլնյուսյան գագաթաժողովին մասնակցելու պաշտոնական հրավեր է ստացել: Լիտվայի փոխարտգործնախարար Անդրիուս Կրիվասը պաշտոնական հրավերները փոխանցել է Արեւելյան գործընկերության 6 երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելոռուսի, Վրաստանի, Մոլդովայի եւ Ուկրաինայի դեսպաններին: Վիլնյուսյան գագաթաժողովին մասնակցելու հրավերը ստորագրել են Լիտվայի նախագահը, Եվրոպական խորհրդարանի նախագահ Հերման Վան Ռոմպեյը եւ Եվրահանձնաժողովի նախագահ Ժոզե Մանուել Բարոզուն:

ԳՈՐԾԱԳԻՐԸ ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ 15 ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ 40 ՏՈԿՈՍ ԱՃ

2014 թվականի հունվարի 1-ից կենսաթոշակները կավելանան 15 տոկոսով: Հուլիսի 1-ից կբարձրանան նաեւ աշխատավարձերը՝ շուրջ 40 տոկոսով: Այս մասին վարչապետ Տիգրան Սարգսյանը պաշտոնապես հայտարարել է կառավարության արտահերթ նիստում՝ նվիրված «Հայաստանի 2014թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկմանը: Նիստում վարչապետը նշել է նաեւ, որ կառավարությունը մտադիր է մշակել կենսաթոշակի ավելացման արդարացի սանդղակ, որը նպատակ ունի նվազեցնել տարբերությունները՝ չափազանց բարձր եւ ցածր կենսաթոշակների միջեւ: Սպասվում է, որ բարձր թոշակ ունեցողների աճի տեմպը լինելու է ավելի ցածր, իսկ ցածր թոշակ ստացողների աճի տեմպը՝ ավելի բարձր:

ՊԱՏՎՈ ՇՔԱՆՇԱՆ՝ ՌԱՅՄՈՆԴ ՊԱՈՒԼՍԻՆ

Հոկտեմբերի 14-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է լատվիայի հայտնի երգահան, դաշնակահար, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ռայմոնդ Պաուլսին: Հանդիպմանը Սերժ Սարգսյանը ողջունել է հանրաճանաչ երգահանին, բարձր գնահատել մշակույթի գործին նրա անչնվեր ծառայությունը՝ ընդգծելով, որ տասնամյակներ շարունակ Ռայմոնդ Պաուլսի երաժշտությամբ դաստիարակվել են միլիոնավոր մարդիկ, այդ թվում՝ բազմահազար հայաստանցիներ, ովքեր այսօր էլ ջերմությամբ են ընդունում անվանի երաժշտին եւ մեծ տպավորություն են ստացել նրա երեւանյան համերգից: Հանդիպմանը Սերժ Սարգսյանը Ռայմոնդ Պաուլսին պարգեւատրել է Պատվո շքանշանով՝ հայ-լատվիական մշակութային կապերի ամրապնդման եւ զարգացման գործում ներդրած ավանդի, համաշխարհային երաժշտարվեստի բնագավառում ունեցած մեծ վաստակի համար:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐՈՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, հոկտեմբերի 15-ին, Եվրոպական խորհրդարանում հանդիպում է ունեցել խորհրդարանական Եվրամիություն-Հայաստան բարեկամական խմբի ղեկավար Էլենի Տեոխարուսի եւ մի խումբ պատգամավորների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Եվրոպա-Արցախ փոխգործակցությանը վերաբերող հարցեր: Հատուկ ուշադրություն է դարձվել խորհրդարանական կապերի զարգացմանը: Բակո Սահակյանը պահանջված է համարել Եվրոպայի հետ կապերի շարունակական ամրապնդումը՝ այն կարեւոր համարելով քաղաքական, մշակութային եւ մարդասիրական տեսանկյուններից:

ԿՐԹԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 16-ին, ընդունել է տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) բնագավառում Հայաստանի նախագահի 2013թ. կրթական պարգեւներին արժանացած ուսանողներին եւ աշակերտներին: Նա մրցանակակիրներին հանձնել է տարբեր անվանակարգերում նրանց շնորհված պարգեւները. յուրաքանչյուր անվանակարգի համար վկայագրի հետ միասին երիտասարդներն ստացել են հուշախորհրդանիշ եւ դրամական պարգեւ: Այս տարի Հայաստանի նախագահի ամենամյա կրթական պարգեւին արժանացել են 21 ուսանող եւ 18 աշակերտ՝ 5 բուհից եւ 8 ավագ դպրոցից: Հանձնաժողովի որոշմամբ, այս տարի «գլխավոր մրցանակ» անվանակարգում հաղթող չի ճանաչվել:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

19.10.2013. Սուրբ Մատթեոս, Մարկոս, Ղուկաս եւ Հովհաննես Ավետարանիչների հիշատակի տոնը

Մատթեոսը Տիրոջ 12 առաքյալներից է, առաջին Ավետարանի հեղինակը:

Սուրբ Մարկոսն ամենակարճ Ավետարանի հեղինակն է:

Սուրբ Ղուկաս Ավետարանիչը երրորդ Ավետարանի հեղինակն է:

Սուրբ Հովհաննես առաքյալը Դ Ավետարանի, երեք ընդհանրական նամակների եւ «Հայտնության» գրքի հեղինակն է: Հիսուս նրան համարել է «սիրելի աշակերտ»: Հիսուս այնքան էր սիրում եւ վստահում նրան, որ խաչելության պահին Աստվածամորը հանձնեց նրա խնամքին:

26.10.2013. Տասներկու Սուրբ Վարդապետների հիշատակության օր

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԴՅՈՒՐԱՅՎԵՆ

2013 թվականի վերջից Վրաստանի ներքին գործերի նախարարության սպասարկման գործակալությունը, վարորդների համար նորարություններ է սահմանելու, որոնք առնչվելու են վարորդական իրավունքների ստացմանը:

Գործակալության ղեկավար Նինո Կոբախիձեի խոսքով՝ 2013 թվականի վերջից վարորդները կկարողանան ըստ ցանկության հանձնել ավտոմատ կառավարմամբ ավտոմեքենաների վարորդական իրավունքների քննություն: Մինչ այդ, Վրաստանում վարորդական իրավունք ստանալու համար հնարավոր էր, գործնական քննություն հանձնել մեխանիկական կառավարման մեքենաների վրա:

«Սա կարեւոր նորարություն է, որը վարորդներին հնարավորություն է տրվում ընտրել՝ ինչ ավտոմեքենա են նրանք ցանկանում վարել»,- նշեց Կոբախիձեն:

Մյուս նորարությունն այն է, որ վարորդն ըստ իր ցանկության կարող է իր արյան խումբը նշել վարորդական վկայականի վրա:

«Սա հնարավորություն կտա արդյունավետ օգնություն ցուցաբերել վթարների դեպքում»,- ընդգծեց Նինո Կոբախիձեն:

Այս նպատակով՝ սպասարկման գործակալության տարածքում լաբորատորիա կբացվի:

2014 ԹՎԱԿԱՆԻՑ ԿՆԵՐԴՐՎԵՆ ՆՈՐ ՀԱՄԱՐԱՆԻՇԵՐ

2014 թվականի հունվարի 1-ից Վրաստանում շրջանառության մեջ կդրվեն ավտոմեքենաների՝ արտաքին տեսքը փոխած համարանիշեր:

Վրաստանի ներքին գործերի նախարարության Սպասարկման գործակալության տվյալների համաձայն՝ նոր ավտոհամարանիշերը կհամապատասխանեն եվրոպական չափանիշներին: Նոր ավտոհամարանիշերում կեղծիքից պաշտպանության առավել շատ մեխանիզմներ կներդրվեն:

Հին ավտոհամարանիշերը հնարավոր կլինի օգտագործել մինչ ավտոտրանսպորտային փոխադրամիջոցի նոր գրանցումը: Ինչ վերաբերում է վճարովի ավտոհամարանիշեր ունեցողներին, գործակալությունը նրանց առաջարկում է դրանք փոխարինել համարժեք արժեքի համարանիշերով:

ՊՐԵՄԻԵՐԱ

«ԱՆՁՐԵՎ ՎԱՃԱՌՈՂԸ» ԿԱՄ ԼՈՒՐՋ ԽՈՍՔ ԱՍՎԱԾ ԺՊԻՏՈՎ

Անցյալ դարի 30-ականներին ստեղծած եւ թատերաշխարհում մեծ աղմուկ հանած ամերիկացի գրող Ն.Ռիչարդների «Անձրեւ վաճառողը» պիեսը, որ իր ժամանակին շրջել է աշխարհի գրեթե բոլոր բեմերը եւ այսօր էլ շարունակում է մնալ պահանջված ներկայացումներից մեկը, չգիտես ինչու, շրջանցվել է հայ բեմարվեստի կողմից: Այդ ամենը փորձեց շտկել Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի ճանաչված ռեժիսոր Լեւոն Ուզունյանը: Այս ներկայացումով թատերախումբը մեկ ամիս առաջ հյուրախաղերով շրջագայեց ողջ Հայաստանը եւ եղավ մի խումբ քաղաքներում, արժանանալով հանդիսատեսի լուրջ գնահատանքին, իսկ հոկտեմբերի 12-ին, Թբիլիսիի Ակակի Խորավայի անվան դերասանի տանը ներկայացումը հանձնվեց հարազատ հանդիսատեսի դատին:

Ինչ ասել կուզե, որ երիտասարդ դերակատարներ Սերգեյ Սաֆարյանը (Բիլ Ստարբակ), Լյուբա Սահակյանը (Լիզի), Գիորգի Թերժանյանը (Նոյ), Աշոտ Սիմոնյանը (Ջիմի), Արամ Միքայելյանը (շերիֆ Ֆայել) ամենայն պատասխանատվությամբ փորձեցին հանձնել այն լուրջ քննությունը, որ դրված էր նրանց առջեւ: Նրանք պետք է կարողանային իրենց հետ տանել՝ նյութականը հոգեւորից վեր դասող արժեքների մեջ խճճված այսօրվա հանդիսատեսին: «Այս պրեմիերան, ինչոր կերպ, փոխում է իմ ռեժիսորական ամպլուան,- խոստովանեց Լ.Ուզունյանը,- նրանով ես ուզում եմ, երջանկահիշատակ Ֆրունզիկ Մկրտչյանի խոսքով ասած՝ «Հանդիսատեսի հետ՝ ժպիտով խոսել շատ լուրջ թեմայի շուրջ...»:



Ներկայացումն առաջին իսկ պատկերից, արծարծում է ընտանիքի, ամուսնության, անձնական երջանկության հավերժական խնդիրները: Ի պատիվ երիտասարդ դերակատարների, ասենք, որ նրանք կարողացան մտորել տալ հանդիսատեսին՝ կյանքը խթանող բարության ու սարեր սասանող մարդկային հավատի մասին:

Ամուսնանալ երազող, բայց երազանքի ճանապարհին ձախողված ու հուսահատված Լիզին (Լյուբա Սահակյան), նրա հետ նաեւ հանդիսատեսը, հավատաց, առաջին պահ սովորական դրամաշորթ թվացող Բիլի (Սերգեյ Սաֆարյան), իրականում ազնիվ նկարագրին: Հավատացին «երազող» Բիլի հիշեցրած ճշմարտություններին նաեւ մյուս հերոսները հավատացին նրան, որ մեզանից յուրաքանչյուրի մեջ ապրում է լավը, եւ աշխարհը նրանն է, ով տեսնում է այդ լավը, որ բավական է հուշել թույլին, թե ուժեղ ես, եւ նա ուժեղ կլինի...

Ինչպես միշտ, դերակատարները, այս անգամ եւս ցուցադրեցին իրենց պահանջկոտ, նախանձախնդիր վերաբերմունքը սեփական աշխատանքին եւ ստացան արժանի վարձատրությունը՝ հանդիսասրահի բուռն եւ շնորհակալ ծափերը:

Պիեսի գեղագիտական լուծումներին իրենց կարեւոր դերն են կատարել երաժշտական եւ բեմական ձեւավորումները՝ Վալերի Ամիրաղյանի եւ Մալխազ Իոբաշվիլու իրականացմամբ:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԿԱՆԻՇԸ՝ ԸՍՏ ՅՈՒՅԱԲԵՐԱԾ ԽԱՂԻ ՈՐԱԿԻ

Ավարտվեցին աշխարհի 2014 թվականի ֆուտբոլի առաջնության եվրոպական նախընտրական փուլի հանդիպումները:

Ցավոք, թե՛ Վրաստանի եւ թե՛ հայաստանի հավաքականները զրկվեցին Բրազիլիայում անցկացվելիք եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունքից՝ «I» խմբում հանդես եկող Վրաստանի թիմը խմբում զբաղեցրեց չորրորդ հորիզոնականը, իսկ «B» խմբում հանդես եկող Հայաստանի հավաքականը՝, չնայած տպավորիչ խաղին, զբաղեցրեց նախավերջին՝ հինգերորդ տեղը:

ՖԻՖԱ-ի նոր վարկանիշային աղյուսակում Վրաստանի թիմը ետընթաց է գրանցել եւ նոր սանդղակում 350 միավորով հայտնվել է 100-րդ տեղում: Աննախընթաց առաջընթաց է վավերացրել Հայաստանի թիմը, որը միանգամից հաղթահարելով 17 հորիզոնականը, 687 միավորով գրավել է 38-րդ տեղը:

Աղյուսակը գլխավորում է Իսպանիայի թիմը: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցնում նաեւ Գերմանիայի, Արգենտինայի, Կոլումբիայի, Բելգիայի, Ուրուգվայի, Շվեյցարիայի, Նիդերլանդների, Իտալիայի եւ Անգլիայի հավաքականները:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Խունջիկ-մունջիկ գալ: 8.Որէեւ աշխատության ամփոփ ներկայացում: 9.Բաշկորտոստանի մայրաքաղաքը: 10.Արտադրական ձեռնարկություն Հայաստանում: 13.Համետ: 18.Փափուկ հենարան գլխի տակ դնելու համար: 19.Քաղաք Մեքսիկայում: 22.Ուղարկել: 23.Որոշակի տարածություն, վայր: 28.Սփյուռքահայ անգլիագիր գրող ... Արլեն: 29.Անմեղության ապացույց: 32.Փշերից կազմված: 33.Անասունների չորացրած աղբ, վառելիք: 34.Ներել հարկադրելը: 37.Գուցե: 39.Փոքրիկի աչքը: 41.Տրիոլետ: 44.Բնաշխարհիկ, տեղացի: 46.Ռուսական էստրադային խումբ «... Տրոլ»: 47.«Իսլամական Կոնֆերանսի Երկրներ»: 49.Անջատ, ջոկ: 50.Մաքուր, ազնիվ, անարատ: 52.Աշխարհի լավագույն դիզայներներից մեկը՝ Քրիստիան ...: 54.Տարփալից: 55.Որեւէ ծրագրի ժամանակավոր տարբերակ: 56.Թբիլիսցիների դիմելածեւը: 57.Մրսած թոքերին հագուրդ տալ: 58.Կարծր վառելանյութ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.«... ուլիկ, սիրուն բալիկ»: 2.Մութ, խավար: 3.Ուռենու ճկուն ոստ (բրբ.): 4.Զգոն: 5.Նանայացի որսորդ՝ Դերսու ...: 6.Կաթոլիկ քահանա: 11.Կորովի, զորեղ: 12.Ամերիկահայ բանաստեղծ ... Դերենց: 14.Կուսակրոն քահանա: 15.Բացվածք, անցք, խոռոչ: 16.Կարծր ու ողորկ քար: 17.Միավորների միջազգային համակարգում պայծառության միավորի հնացած անվանումը (կդ/մ2): 20.Հյուղակ, տնակ: 21.Կաթնամթերք: 24.Պետություն Ասիայում: 25.Հայաստանի ամենացածրադիր լիճը: 26.Քիմիական տարր, դեղնականաչավուն թունավոր գազ: 27.Սրտի զարկ: 30.Երկրորդ նախաճաշ: 31.Թեժ, կրակոտ: 35.Դրախտային այգի: 36.Մահմեդականների հոգեւոր առաջնորդ: 37.Ամերիկացի մոդել, դերասան եւ պրոդյուսեր ... Սոմերհոլդեր: 38.Երկարանալ, ձգվել: 40.Երրորդ դեմքի դերանուն: 42.Անգլիացի ֆուտբոլիստ Ուեյն ...: 43.Պետություն միջերկրական ծովի արեւելյան մասում: 44.Կղզի Կարիբյան ծովում: 45.Կանացիության եւ մայրության եգիպտական աստվածուհին: 48.Շվեդ բնագետ եւ բժիշկ ... Լինեյ: 51.Հայաստանի «Բարձրագույն որակավորման հանձնաժողով»: 52.Նավանորոգարան: 53.Մարմնի մաս:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Աշխաբադ: 9.Արծաթ: 10.Լիմոժ: 11.Նախարար: 12.Ուժգին: 14.Գումար: 16.Կոմերիտական: 18.Երաշտ: 20.Վասակ: 21.Տաճատ: 25.Կիթառ: 26.Ոոպեասլաք: 28.Ախոյան: 29.Ալտ: 30.Վալիկո: 31.Միջնորդել: 33.Հայկո: 34.Փափագ: 36.Բոքոն: 40.Նարբե: 41.Պատրաստակամ: 43.Կիսատ: 44.Կորալ: 45.Դավաճան: 46.Գորիս: 47.Արշակ: 48.Բաբելոն:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մշտապես: 2.Քարաճիկ: 3.Դասարան: 4.Երաժիշտ: 5.Նազիկ: 7.Հիսուն: 8.Նորավառ: 13.Նոտար: 14.Գալիք: 15.Երաշխավոր: 17.Կատակոմբա: 19.Տառարան: 20.Վանական: 22.Տոկիո: 23.Սեանս: 24.Տատրա: 25.Կանեփ: 27.Ալո: 31.Մկրատ: 32.Լաչակ: 33.Հորիզոն: 35.Գավազան: 37.Արտաշատ: 38.Ասպարեզ: 39.Մարաթոն: 41.Պատիժ: 42.Մոնրո:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge skype: VRASTAN-1920
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445